**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**
**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան — 21-ը մարտի 2017թ.
ժամը $11^{15}$

Մասնակցում էին՝ **գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ Դ. Ղուլյանը (**ԳԱՊ**),
ՀՀ ՊՆ ԿՇՁԲ վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը (**ԳԱ**),
ՀՀ ՊՆ Ի վարչության իրավական ապահովման բաժնի սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը (**ԳԱ**),
ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյանը (**ԳԱ**)
**Գնումները համակարգող՝** ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓԶՎ ԱԾԳՓՁ բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Թովմասյան:

***«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12 – ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. Էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության, բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշելու մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Շինանյութերի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1. | «Էկոմիքս» ՍՊԸ |
| 2. | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 3. | ԱՁ Նարեկ Մայիլյան |
| 4. | «Կոնսէլ» ՍՊԸ |
| 5. | «Մեծ Ծիածան» ՍՊԸ |
| 6. | «Տիգման Գրուպ» ՍՊԸ |
| 7. | «Ա-2» ՍՊԸ |
| 8. | «Էլիպս գրուպ» ՍՊԸ |
| 9. | «Էրողավ» ՍՊԸ |
| 10. | «Վարքադ» ՍՊԸ |
| 11. | «Լիդեր քոմփանի» ՍՊԸ |
| 12. | ԱՁ Գրիգոր Այվազյան |
| 13. | «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ |
| 14. | ԱՁ Հովհաննես Մարտիրոսյան |
| 15. | «Նիկօ-Տեկ» ՍՊԸ |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.***

**2. Էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության, բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

2.1 Մասնակիցներից 14-ի էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտերը կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար անընդունելի, քանի որ ներկայացված էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ, և հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել:
2.3 Գնահատող հանձնաժողովի մինչև 28/03/17թ. ուսումնասիրել է մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ առկա փաստաթղթերը, որոնցից որոշ փաստաթղթեր են համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին) և գնահատող հանձնաժողովի որոշմամբ գնահատվել են բավարար:
2.4 Հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի 7.3 և 7.4 կետերը, **մեկ աշխատանքային օրով** կասեցրել է նիստը և առաջարկել է **«Էլիպս գրուպ», «Կոնսէլ» «Երևանի սննդի կոմբինատ», «Վարքադ» ՍՊԸ-ներին, Գրիգոր Այվազյան, անհատ ձեռնարկատերերին,** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները (ծանուցումը կցվում է): Ներկայացված շտկումները հանձնաժողովի կողմից հիմք են ընդունվել:
2.5 Հանձնաժողովը մինչև 31/03/2017թ, ուսումնասիրել է մասնակիցների էլ հայտերը և գնային առաջարկները ընթացակարգի հրավերի պահանջներին և գնահատել է
ա. որոշ առաջարկներ՝ համապատասխան /ճիշտ է/,

բ. որոշ առաջարկներ՝ անհամապատասխան /սխալ/, և մերժել է՝

- ԱՁ Հովհաննես Մարտիրոսյան սահմանված ժամկետում անհամապատասխանության շտկում չի ներկայացրել՝ հրավերի 7.4 կետ,

- «Երևանի սննդի կոմբինատ» ՍՊԸ- հայտը՝ սահմանված ժամկետում անհամապատասխանության շտկում չի ներկայացրել՝ հրավերի 7.4 կետ,

- «Էրոդավ» ՍՊԸ գնային առաջարկի 16-րդ չափաբաժնի մասով արձանագրվել է անհամապատասխանություն՝ հրավերի պահանջների նկատմամբ՝ տառերով և թվերով գրված գումարը միմյանց չեն համապատասխանում,

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

3.1 Հանձնաժողովն ուսումնասիրել է մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/:

3.2 Հանձնաժողովը, հիմք ընդունելով հրավերի 7.2.5 կետի պահանջները (ծանուցումը կցվում է), մասնակիցներին հրավիրել է միաժամանակյա բանակցությունների: 05/04/17թ. կայացած բանակցության արդյունքում ոչ մի ընկերություն գին չի նվազեցրել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**4. Ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշելու մասին.**

4.1 Հանձնաժողովը 17/05/17թ. որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և՝

Ա) ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել ամենաէժան գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին՝ Հավելված № 1,

Բ) չկայացած հայտարարել՝ առաջարկի բացակայության հիմքով՝ 1, 19, 22, 25, 30, 32, 34, 35, 38, 39, 53, 68 իսկ պատվիրատուի մոտ առկա ֆինանսական միջոցները գերազանցելու հիմքով 3-18, 21, 31, 36, 42, 43, 47, 48, 50, 52, 54, 57, 60, 61, 65, 70, 74, 75, 77-79, 81-83 չափաբաժինները՝ Հավելված № 1:

Գ) նրանց առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Դ) առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացնել հարցում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Մասնակցի կողմից հայտի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:***

**Գնահատող՝** Դ. Ղուլյան

**Գնահատող՝** Ա. Պապյան

**Գնահատող՝** Ա. Մաղաքյան

**Գնահատող՝** Հ. Բաղալյան

**Գնումները համակարգող՝** Գ. Թովմասյան